# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## N ՇԳ – ՇՀԱՊՁԲ -17-15/1
## ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

գ. Ախուրյան 23. 01. 2017 թ. Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մկրտչյան, Կ.Առաքելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Պողոսյան

1. «ՇԳ – ՇՀԱՊՁԲ -17 -15/1» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

1.1 Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ՀՀ Շիրակի մարզի, Ախուրյանի գյուղապետարանի վարչական շենքում տեղակայված Շիրակի ԳԱՄԿ-ի գրասենյակում

1.2 *Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:*

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «ՍԻՓԻԷս Օիլ Քորփորեյշն » ՍՊԸ | ք. Երևան, Պուշկինի 1<br>հեռ.54-09-11 |
| 2. | « ՖԼԵԾ » ՍՊԸ | ք.Երևան, Ե.Կողբացու 30<br>Հեռ.53-42-33 |
| 3. | « Մաքսիուր » ՍՊԸ | ք.Երևան, Տպագրիչների 8<br>Հեռ. 52-67-51 |

1.3 Գնային առաջարկներ ներկայացրած այլ մասնակիցներ չկան:

1.4 Տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

1.4.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.5 Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

1.5.1 «ՇԳ – ՇՀԱՊՁԲ -17 -15/1 » ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված «ՍԻՓԻԷս Օիլ Քորփորեյշն » ՍՊԸ , «ՖԼԵԾ » ՍՊԸ և «Մաքսիուր » ՍՊԸ փակ կնքված ծրարով ներկայացրել են՝շրջանակային ընթացակարգին մասնակցելու դիմում, հայտարարություն ընթացակարգին հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, մասնագիտական փորձառության, տեխնիկական միջոցների, ֆինանսական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարություն, գնային առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների հրավերով

նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, հայտարարություն ԵՎրասիականՏնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի էջերը կնքված և ստորագրված են Մասնակիցների կողմից:

**1.6 Տվյալներ մասնակցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**1.6.1 « ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն » ՍՊԸ , «ՖԼԵԾ » ՍՊԸ և «Մաքսիուր » ՍՊԸ** կողմից մրցույթին ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**1.7 Մասնակցների առաջարկած գները՝ /ՀՀ դրամով /**

Մասնակիցների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքների հաշվարկներում թվաբանական անճշտություններ չկան:

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | « ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն »ՍՊԸ | | « ՖԼԵԾ » ՍՊԸ | | « Մաքսիուր» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1. | Բենզին /ռեգուլյար/ | **2.480.000** | **2.976.000** | **2.560.000** | **3.072.000** | **2.552.000** | **3.062.400** |
| 2. | Դիզելային վառելիք /ամառային/ | **61.000** | | **62.000** | | **59.000** | |

**1.8 Հանձնաժողովը որոշեց՝**

1. « Առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ներկայացնել հարցում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարները:

2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

1.9 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 1.8 կետով հարցման ստացման հաջորդող օրը ժամը 11: 00-ին՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի վարչական շենքում տեղակայված Շիրակի ԳԱՄԿ-ի գրասենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3,դեմ՝0:

**1.10 Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն և ազգանունները.**

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Համայնքների զարգացման հարցերի մասնագետ՝ Ա.Հարությունյան

**Անդամներ՝**

Տեղեկատվության և շուկայավարման հարցերի մասնագետ՝ Գ. Մկրտչյան

Վարորդ-մեխանիկ՝ Կ.Առաքելյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Գրասենյակի ղեկավար՝ Ս.Պողոսյան